

ՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԵՂԸ ԵՎ ԴԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Ժամանակակից տնտեսագիտության մեջ, ինչպես տեսությունում, այնպես էլ գործնականում, կենտրոնական հարցադրումներից մեկը պետության դերի և տեղի հարցն է երկրի տնտեսական համակարգում և հատկապես սոցիալ-տնտեսական համակարգում: Այս խնդրի լուծման համար առաջարկվող սկզբունքային մոտեցումները տարբեր գիտական դպրոցների կողմից էականորեն տարբերվում են իրարից: Լիբերալ տնտեսագետների դիրքորոշումը այս հարցի շուրջ հայտնի է և լայն տարածում է գտել մի շարք երկրներում, այն որդեգրում է պետության նվազագույն միջամտություն տնտեսության կարգավորման գործընթացներին: Սակայն մի շարք այլ դպրոցներ, ընդհակառակը, հիմնավորում են պետության ակտիվ միջամտության անհրաժեշտությունը շուկայական գործընթացներին: Այն հարցի պատասխանը, թե որքան պետք է լինի պետության միջամտության չափը տնտեսական համակարգին, միանշանակ տալ չառ դժվար է, քանի որ, ինչպես ցույց է տալիս միջազգային փորձը, տարբեր երկրներ զարգացման տարբեր ժամանակաշրջաններում հարել են մեկ այս, մեկ մյուս տեսակետներին: Պետության առանձնահատուկ տեղը հասարակական-տնտեսական համակարգում պայմանավորված է նրանով, որ այն ապահովում է երկրի սոցիալ-տնտեսական համակարգի կառավարման գործընթացը ամբողջությամբ: Շուկայական տնտեսության մեջ պետությունը միակ սուբյեկտն է, որն ունի հարկադրման իրավունք: Այդ իրավունքը իրականացվում է պատժամիջոցների համակարգերի կիրառման միջոցով և որպես կանոն ստանում է օրենսդրական ուժ: Մյուս կողմից, պետությունը հանդես է գալիս որպես հավասարազոր տնտեսական սուբյեկտ շուկայում գործող մյուս մասնավոր ընկերությունների շարքին և շուկայի լիարժեք մասնակից: Պետության կարգավորման անհրաժեշտությունը առաջանում է շուկայում իհայտ եկող օբյեկտիվ պատճառներով, որոնց արդյունքում ազատ շուկայական հարաբերությունները դառնում են անբարենպաստ հանրային շահերի պաշտպանվածության առումով: Այլ խոսքով, պետության միջամտությունը տնտեսությանը արդարացվում է միայն այն դեպքերում, երբ շուկան լիարժեք չի աշխատում կամ չի բավարարում հանրային ռեսուրսների օպտիմալ օգտագործմանը և բաշխմանը կամ հանրային արդյունքի վերաբաշխման ժամանակ չի ապահովվում սոցիալ տնտեսական արդարությունը: Հաճախ շուկայական հարաբերություններում եկամուտների բաշխման պրոցեսում կարող է ծագել մեծ չափերի հասնող սոցիալական անհավասարություն հասարակության անդամների միջև: Հետևաբար պետության կարգավորման խնդիրը, ծագելով նրա ֆունկցիաներից, դա արժանապատիվ կեսամակարդակի ապահովումն է հասարակության այն խավերի համար, որոնք չունեն բավականաչափ եկամուտներ շուկայական համակարգի շրջանակներում կամ ընդհանրապես չեն էլ կարող այն ունենալ (օրինակ՝ թռչակառուներ, հաշմանդամներ): Պետական կարգավորման ընդարձակումը տնտեսության մեջ արդարացվում է մինչև այն ժամանակ, քանի դեռ կատարվող ծախսերը գերազանցում են ստացվող եկամուտներին, որոնք առաջանում են շուկայի անկայունության կամ թերզարգացվածության պատճառներով, ինչպես նաև ֆինանսական և տնտեսական ճգնաժամերի ժամանակ, ինչին ականատես ենք այսօր: Հետևաբար, պետությունը տնտեսական համակարգում պետք է ունենա իր ուրույն տեղը և դիրքը: Դրա չափերը պետք է համապատասխանեն հասարակական բարիքների պահանջարկին, արտաքին գործոնների մասշտաբներին, ինչպես նաև պետության տնօրինման

տակ գտնվող ռեսուրսների իրական չափերին: Ժամանակակից տնտեսագիտության մեջ, հաճախ պետական սեկտոր հասկացությունը նույնականացվում է հասարակական սեկտոր հասկացության հետ: Այս հասկացությունները նույնը չեն, բայց դրանք խիստ փոխկապակցված են մեկը մյուսին: Հասարակական սեկտորը գործունեության ոլորտ է, որը նպատակաուղղված է շուկայի կայունության ամրապնդմանը, ինչպես նաև հասարակության սոցիալական բարօրության բարձրացմանը: Այն ընդգրկում է բյուջետային կազմակերպությունները, պետական արտաբյուջետային ֆոնդերը և կազմակերպությունները, պետական ձեռնարկությունները և այլ պետական սեփականություն հանդիսացող օբյեկտներ: Սակայն բոլորովին արդարացի չի լինի, եթե հասարակական սեկտորին, բառի լայն իմաստով վերագրվեն նաև պետական ոչ առևտրային կազմակերպությունները, որոնց արտադրանքը դիմակայում են շուկայական մրցակցությանը և ունեն որոշակի արտոնյալ հատկանիշներ: Հասարակական սեկտորին կարելի է վերագրել նաև ոչ պետական ոչ առևտրային կազմակերպությունները, որոնք լայն կիրառություն են գտել աշխարհի առաջատար երկրներում և հանդիսանում են քաղաքացիական հասարակարգի կարևոր տարրերից մեկը: Ոչ պետական ոչ առևտրային կազմակերպությունները պետականից տարբերվում են նրանով, որ դրանք ստեղծվում են կամավորական սկզբունքներով և գործում են անկախ: Նրանց գործունեությունը աչքի է ընկնում մատուցվող ծառայությունների բարձր պատասխանատվությամբ շահառուների նկատմամբ և բարձր թափանցիկությամբ: Շատ դեպքերում ոչ առևտրային կազմակերպություններին տրվում է նաև կարգավորող ֆունկցիաներ, որոնք ավանդաբար վերագրվում են պետությանը:

Գոյություն ունեն տարբեր մեթոդներ հասարակական սեկտորի մասշտաբների և դրանց տնտեսության մասնակցության գնահատման համար: Համեմատաբար պարզ և տարածված մեթոդներից մեկը, դա ազգային վիճակագրության տվյալների հիման վրա մշակվող և ուսումնասիրվող ցուցանիշներն են: Այդ ցուցանիշների շարքին են դասվում եկամուտների և բյուջետային ծախսերի բացարձակ հարաբերակցությունը հիմնական մակրոտնտեսական ցուցանիշներին, օրինակ ներքին համախառն արդյունքին, պետական ծառայողների չանակին, դրանց բաշխման մակարդակով ըստ կառավարման կառուցվածքի, պետական ունեցվածքի չափերով, պետական ձեռնարկությունների տեսակարար կշռով տնտեսության համապատասխան ճյուղում և այլ նմանատիպ ցուցանիշներ: Պետական մասնակցության մասշտաբները տնտեսության մեջ տարբեր երկրներում տարբեր են: Օրինակ Չինաստանում պետության կողմից ստացվող եկամուտները չեն գերազանցում ՀՆԱ-ի 8%-ը, իսկ այնպիսի երկրներում, ինչպիսիք են՝ Շվեդիան, Ֆրանսիան և Իտալիան, այդ ցուցանիշը կազմում է մոտ 40%: Առանձին դեպքերում, տարբեր տարիներին ՀՆԱ-ի վերաբաշխման գործընթացային, պետության մասնակցությունը տարբեր երկրներում ավելի բարձր էլ է եղել: Օրինակ՝ 1987թ. Շվեդիայում պետության մասնակցության մակարդակը կազմել է ՀՆԱ-ի 62, 7%:

Տարբեր երկրներում պետական սեփականության մասշտաբներն էլ են տարբեր: Օրինակ՝ Անգլիայում, Ֆրանսիայում և Գերմանիայում պետական ձեռնարկությունները մեծ տեսակարար կշիռ են կազմում արդյունաբերական ճյուղերում, իսկ Ճապոնիայում, ԱՄՆ-ում պետական ձեռնարկությունները, համարյա բոլոր արտադրական ճյուղերում, չեն գերազանցում 25%-ը, ՌԴ-ում այն կազմում է մոտավորապես 8%, Հայաստանում այն չի գերազանցում 2%-ը:

Տնտեսության մեջ հասարակական սեկտորի մեծությունը որոշվում է դրա բնականոն գործունեությամբ ապահովող շահերի և ծախսերի հարաբերակցությամբ: Շահերի շարքին են դասվում՝ շուկայի տարաբնույթ վնասների փոխհատացումները, տնտեսության ցիկլիկ զարգացման ապահովումը, ինչպես նաև սոցիալական կայունության ապահովումը քաղաքացիների եկամուտների համահարթեցման ճանապարհով: Ծախսերը՝ դա հարկերի մակարդակի բարձրա-

ցումն է, պետական կառավարման ապարատի պահպանման, սոցիալ-տնտեսական ծրագրերի իրականացման և մանատիպ այլ ծախսեր:

Տարբեր երկրներում պարբերաբար իրականացվում են ադմինստրատիվ բարեփոխումներ, որոնք նպատակառոտված են պետական ապարատի կրճատմանը և դրա կառուցվածքի օպտիմիզացմանը: Սակայն, ինչպես վկայում է միջազգային փորձը, հասարակական սեկտորը օբյեկտիվ ընդարձակման և աճի միտում ունի: Դրա պատճառներն են հանդիսանում՝

1. Շուկայի տատանման և խափանման առկայությունը և ծավալները: Քանի որ տնտեսության զարգացմանը զուգընթաց առաջանում են նոր գործունեության տեսակներ և ոլորտներ, որոնք շուկայում ինքնուրույն չեն կարող կարգավորվել և արդյունավետ գործել, դրանցից առավել ցայտունը, օրինակ հեղինակային սեփականության պահպանությունն է: Արդյունքում առաջանում են նոր իրավահարաբերություններ, որոնք պետության առջև նոր խնդիրներ և նոր կարգավորման պահանջներ են առաջացնում և հասարակական սեկտորի ընդարձակման պատճառ հանդիսանում:

2. Քաղաքական կոնյուկտուրայի հերթափոխությունը: Հասարակական սեկտորի դինամիկան՝ կախված հերթական ընտրությունների պատրաստման և անցկացման հետ, հակում ունի աճելու, քանի որ յուրաքանչյուր ընտրվող քեկնաժու, ձգտելով մեծացնել իր ընտրողների քանակը, մեծացնում է սոցիալական բնույթի ծախսերը, որոնք հետագայում ծայրահեղ դժվար են դառնում կրճատել:

3. Վերաբաշխողական ծրագրերը: Կենսամակարդակի բարձրացման խնդիրը շարունակում է մնալ արդիական ոչ միայն աղքատ կամ նոր զարգացող, այլ նաև աշխարհի տնտեսապես զարգացած երկրներում: Բնակչության մի զգալի մաս, որոնք այս կամ այն պատճառով չեն կարողանում ապահովել իրենց համար արժանավայել կենսամակարդակ շուկայական համակարգում, կախված են տրանսֆերտներից, որոնք ստանում են հասարակական սեկտորից: Այն քաղաքական ուժերը, որոնք հանդես են գալիս վերաբաշխողական ծրագրերով, աջակցություն են ստանում հենց այս ընտրողներից: Հետևաբար պետական ծախսերի աճը, որպես կանոն ավելի ակնհայտ և արագ դրական արդյունքի է հանգեցնում, քան դրանց կրճատումը: Այդ իսկ պատճառով վերաբաշխողական ծրագրերի ընդարձակման նախաձեռնությունները ավելի մեծ ոգեշնչվածությամբ են ընդունվում հասարակության կողմից, քան այլ ծրագրերը:

4. Բյուրոկրատական ապարատը: Տեսության մեջ հայտնի է, որ ցանկացած բյուրոկրատական կազմակերպություն ձգտում է ընդարձակել իր ազդեցության և գործունեության շրջանակները: Պետական կառույցների գլխավոր նպատակներից մեկը՝ շրջանառվող ռեսուրսների նկատմամբ վերահսկողության և հսկողության բարձրացումն է, ինչը անմիջականորեն կախված է հասարակական սեկտորի ծախսերի բարձրացման հետ:

Հասարակական սեկտորի ընդարձակման դրական և բացասական հետևանքները արտահայտվում են տարբեր ձևերով: Եթե դրական արդյունքները արտահայտվում են բավական արագ և որոշակի անձնավորվում են, ապա բացասական միտումը դժվար տեսանելի է և շոշափելի է դառնում երկարատև ժամանակի ընթացքում: Այսպիսով, եթե պետությունը չի ընդունում հասարակական սեկտորի կրճատման հատուկ ծրագրեր, ապա այն ունի ընդարձակման միտում:

Եկամուտների վերաբաշխումը մեծ սոցիալական արդարության հասնելու, աղքատ կամ անբավարար եկամուտներ ունեցող բնակչության շահերի պաշտպանության նպատակով, պետության առաջնային խնդիրներից մեկն է հանդիսանում: Եկամուտների համահարթեցման հիմնական գործիքներից մեկը դա սոցիալական տրանսֆերտների համակարգն է:

Տրանսվերտները ուղղվում են բնակչության այն խավերի օժանդակությանը, որոնք դուրս են մնում շուկայական գործընթացներում եկամուտների բաշխման գործընթացից և անկարող են ինքնուրույն ապահովել իրենց կյանքի բավարար մակարդակը: Խոսքը գնում է լրիվ կամ մասնակի անաշխատունակ քաղաքացիների մասին, իչպիսիք են՝ հաշմանդամները, լքյալ ծերերը, թոշակառուները և այլ սոցիալապես անպաշտպան խավերը: Բացի դրանցից սոցիալական տրանսվերտները կարող են ուղղվել նաև պետության կամ հասարակության նկատմամբ հատուկ վաստակ ունեցող անձանց, դրանք են՝ պատերազմի վետերանները, արտակարգ իրավիճակների հետևանքների վերացման մասնակիցները, աշխատանքի վաստակավոր գործիչները կամ բազմազավակ մայրերը՝ ծնելիության մակարդակի բարձրացման նպատակով:

Տարբեր երկրներում եկամուտների համահարթեցմանն ուղղված վերաբաշխողական ծրագրերը և դրանց չափերը տարբեր են: Դրանք հիմնականում կախված են հասարակության նախասիրություններից հոգուտ եկամուտների համահարթեցման, պետության կողմից իրականացվող քաղաքական ուղղությունների գերակայություններից, կուտակված սոցիալական պարտավորություններից, երկրի զարգացածության աստիճանից: Ըստ որում, սոցիալական ծախսերի մակարդակի գնահատման հիմնական գործոնը քաղաքական ընտրություններ են, որոնցով որոշվում է երկրի զարգացվածության մակարդակը:

Հայաստանի Հանրապետությունը ընդունել է, որոշակի շեղումներով, Ռուսաստանի Դաշնության սոցիալական համակարգի ծրագրերը: Գործնականում հայտնի են բազմաթիվ այլ սոցիալական վճարումների տեսակներ, որոնցից յուրաքանչյուրն ունի իր առավելությունները և թերությունները: Սակայն կիրառվող տարբեր տիպի վճարումները ծառայում են մույն նպատակին՝ սատար կանգնել հասարակության կարիքավոր խավերին: Այդ իսկ պատճառով սոցիալական տրանսվերտների կառավարման խնդիրն է՝ ընտրել և կիրառել հնարավոր արդյունավետ ձևեր, եկամուտների համահարթեցման գործընթացներում: Օրինակ ՌԴ-ում գոյություն ունեն հետևյալ տրանսվերտային վճարումների տեսակները:

1. Դրամական վճարումներ. Դրանք են՝ թոշակները և նպաստները, կրթաթոշակները, սուբսիդիաները, որոնք տրամադրվում են որոշակի նպատակային ծախսեր իրականացնելու համար, փոխհատուցումները քաղաքացիներին, նրանց կողմից կատարված ծախսերի փոխհատուցման դիմաց: Այսպիսի տրանսվերտները կարող են իրականացվել միանվագ, մեկ անգամ հատկացման պայմանով կամ մշտական վճարման պայմանով: Համաձայն «ՌԴ-ի նպաստների և սոցիալական վճարումների չափի որոշման կարգի մասին» օրենքի 7 օգոստոսի 2000թ., պարտադիր սոցիալական վճարման չափը որոշվում է ելնելով նվազագույն աշխատավարձի չափից, հաստատվում են դրամական արտահայտության կայուն չափերով, որոնք ճշգրտվում են ամեն տարի՝ ելնելով երկրի նվազագույն կենսամակարդակի ապահովման պահանջներից:

Դրամական վճարումների առավելությունը, համեմատած այլ տրանսվերտների վճարման ձևերի հետ, կայանում է նրանում, որ դրանք լրացնում են քաղաքացիների եկամուտները, և դրանց օգտագործման վրա ոչ մի սահմանափակում չկա: Քաղաքացին այն կարող է օգտագործել իր հայեցողությամբ, իր համար նախընտրելի արդյունավետությամբ:

Թերությունն այն է, որ քաղաքացին դա կարող է օգտագործել ոչ այն նպատակների համար ինչի համար դա տրամադրվում է, դրանով ավելի վատացնելով իր սոցիալական վիճակը, մյուս կողմից այսպիսի վճարումների համակարգը չի նպաստում քաղաքացու շահագրգռվածությանը աշխատանքային գործունեության նկատմամբ: Փորձը ցույց է տալիս, որ դրամական վճարումների չափերի բարձրացումը նպաստում է գործազուրկների քանակի աճին, իսկ այդ համակարգի բարդեցումը կտրուկ իջեցնում դրանց արդյունավետությունը, քանի որ մեծանում են

դրանց հատկացման հետ կապված վերահսկողության ծախսերը, ինչն էլ փոքրացնում է դրանց չափերը:

Ինչպես Հայաստանում, այնպես էլ Ռուսաստանում, գուցե տարբեր չափերով, բայց այնուամենայնիվ լուրջ խնդիր է մնում սոցիալական վճարումների ցածր չափերը, որոնք ամենևին չեն համապատասխանում նվազագույն կենսամակարդակի լիարժեք ապահովման պահանջներին:

Ելնելով նշվածից, կարելի է տալ դրամական տրանսվերտների արդյունավետությունը բարձրացնելու հետևյալ պահանջները: Դրանք են՝

- վճարումները պետք է լինեն խիստ հասցեագրված, այսինքն դրանք պետք է հատկացվեն առաջին հերթին անաշխատունակ քաղաքացիներին,
- աշխատունակ քաղաքացիներին հատկացվող սոցիալական վճարումները պետք է կրեն ժամանակավոր բնույթ և, որպես կանոն, ոչ մեծ չափերով: Դրանց հաշվարկման ժամանակ պետք է ելնել անձին կամ ընտանիքին հատկացվող այլ վճարումների մեծությունից:

2. Ոչ դրամական օգնություն. Այսպիսի օգնությանն են վերաբերում անվճար ծառայություններից օգտվելու իրավունքը, օրինակ անվճար կրթությունը, անվճար առողջապահական ծառայությունները և հատկացվող դեղորայքը, անվճար եթեկության իրավունքը և այլն:

Ոչ դրամական օգնության առավելությունը կայանում է նրանում, որ նրանից օգտվում են ուղղակիորեն, խիստ նպատակային ձևով, և այն ոչ մի կերպ չի ազդում դրանցից օգտվողի աշխատանքային ակտիվության վրա:

Սակայն օգնության այս ձևն էլ ունի իր թերությունները: Նախ ոչ բոլոր քաղաքացիներն են, որ ունենալով այսպիսի արտոնություններ, օգտվում են դրանցից, թեկույզ այն պարզ պատճառով, որ այդ օգնությունը նրանց համար հասանելի չի կամ ավելորդ է, քանի որ դրանք իրենց համար պահանջ չեն հանդիսանում, ի հակառակն դրամական օգնության, որը կարող էր բարելավել նրանց սոցիալական վիճակը: Մյուս կողմից այս արտոնությունները չեն ապահովում դրանցից օգտվելու բոլոր անհրաժեշտ պայմանները: Օրինակ անվճար կրթությունից օգտվելու համար, դեռևս անվճար կրթություն ստանալու հնարավորությունը դեռ քիչ է, քանի որ այդ իրավունքից օգտվելու համար անհրաժեշտ են նաև լրացուցիչ միջոցներ, կախված գրեմական պիտույքների ձեռքբերման հետ կամ այլ համապատասխան անհրաժեշտ ծախսերի հետ: Դրա համար հաճախ անհրաժեշտ է կիրառել ոչ թե մեկ օգնության ծրագիր, այլ մի քանի ծրագրերի համակարգ: Մյուս կողմից այսպիսի օգնության ծրագրերի կազմակերպումը և իրականացումը պահանջում են կազմակերպչական մեծ ծախսեր, կախված կարիքավորների ընտրության հետ:

3. Արտադրողների ֆինանսավորում. Պետությունը կարող է տրամադրել նաև սուբսիդիաներ կամ առևտրային գործունեություն իրականացնելու համար արտոնություններ այնպիսի կազմակերպություններին, որոնք զբաղվում են սոցիալական նշանակություն ունեցող արժեքների արտադրությամբ կամ ծառայությունների մատուցմամբ: Հասարակության շահը այս դեպքում այդպիսի արժեքների ստացման հասանելիության և դրանց գների իջեցման մեջ է կայանում: Ընդ որում այս դեպքում, ի տարբերություն տրանսվերտների այլ ձևերի, այս բարիքներից օգտվում են ոչ միայն հասարակության մի առանձին խումբ, այլ նրա բոլոր անդամները, անկախ կենսամակարդակից:

Արտադրողների ֆինանսավորումը իր էությամբ մոտ է ոչ դրամական օգնության ձևին, սակայն դրա առանձնահատկությունը կայանում է նրանում, որ տրանսվերտի այս ձևը կախված չի կարիքավորների մեծ քանակից ընտրության հետ, հետևաբար նաև չի պահանջում վարչական մեծ ծախսեր:

Սակայն կան բազմաթիվ թերություններ, որոնք տրանսվերտի այս ձևը դարձնում են խիստ անարդյունավետ: Դրանք են՝

- սուբսիդավորված ապրանքներ, ցածր գներով կարող է ձեռք բերել ոչ միայն կարիքավոր խավը այլ հասարակության բոլոր անդամները: Դա նշանակում է, որ սոցիալական ծախսերը կորցնում են իրենց նպատակաուղղվածությունը և ուղղվում են հասարակության այն անդամներին, որոնց համար դրանք նախատեսված չեն,
- արտադրողների ֆինանսավորումը կարող են արդարացված չլինել, եթե սուբսիդավորված ապրանքների պահանջարկը մեծանում է կենսամակարդակի աճին զուգընթաց: Դա հիմնականում վերաբերում է բնակ-կոմունալ ծառայություններին,
- արտադրողներին կատարվող հատկացումները խեղաթյուրում են շուկայական մրցակցության պայմանները, ծնում են լոբիստական հետաքրքրություններ իշխանական կառույցներում:

Սակայն, սոցիալական ծրագրերը որպես կանոն չեն սահմանափակվում մեկ տարվա կտրվածքով կատարվող բյուջետային ծախսերով, նրանք նպատակաուղղված են երկարատև ժամանակահատվածում առավելագույն արդյունք ապահովելուն և դուրս են գալիս մեկ տարում իրականացվող ծախսերի շրջանակներից: Այսպիսի ծրագրերը թույլ են տալիս պլանավորել տարբեր տարիների բյուջեները և ուղղորդել միջոցները ստրատեգիական սոցիալական խնդիրների լուծմանը:

Այսպիսի երկարատև սոցիալական ծրագրերից կարող են հանդիսանալ նաև բյուջետային վարկերը: Բյուջետային վարկերը կարող են տրամադրվել ոչ միայն պետական կազմակերպություններին սոցիալական գլոբալ հարցերի լուծման նպատակով, այլ նաև ոչ պետական տնտեսվարող սուբյեկտներին: Այս ճանապարհով ֆինանսավորվող սոցիալական ծրագրերի առանձնահատկությունը կայանում է նրանում, որ տրամադրվող միջոցները ոչ միայն լուծում են սոցիալական խնդիրներ, նպաստում են բնակչության կենսամակարդակի բարձրացմանը, այլ նաև ենթակա են վերադարձման, ինչպես նաև կարող են ապահովել տրամադրված միջոցների աճ, վարկի դիմաց հաշվարկվող տոկոսների ձևով:

Ի տարբերություն այլ վարկերի, բյուջետային վարկերը՝ հանդիսանում են ոչ միայն պարզապես վարկային պարտավորություն առաջացնող գործառնություններ, դրանք իրենց մեջ կրում են բյուջետային ծախսերի հատկանիշներ: Պետությունը հանդես գալով որպես վարկավորող, չի մրցակցում առևտրային բանկերի հետ, ի տարբերություն բանկերի գործելով ի շահ հասարակության, նա շահույթի ստացման նպատակ չի հետապնդում, այլ կողմնորոշված է սոցիալ-տնտեսական և քաղաքական արդյունքների ստացմանը: Սա է պատճառը, որ այս վարկերը, որպես կանոն կրում են արտոնյալ բնույթ: Պետական վարկերը տրամադրվում են հիմնականում այնպիսի սոցիալական խնդիրների լուծման նպատակով, ինչպիսիք են զբաղվածության բարձրացումը, գործազրկության կրճատումը, բնակարանային պայմանների ապահովումը: Դրանք կարող են լինել գյուղատնտեսության զարգացման, փոքր բիզնեսի աջակցության, հիփոթեքային վարկավորման նպատակով տրամադրված արտոնյալ վարկեր և այլն: